

**ՎԵՂՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ
ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ՝ ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Սիրելի կանայք,

Շնորհավորում եմ ձեզ հիշարժան և գեղեցիկ գարնանային այս տոնի կապակցությամբ:

Այս գեղեցիկ տոնն էլ ավելի է արժևորվում՝ գարնան գալուստն ազդարարելով, և գարունն էլ գեղեցիկ է հատկապես ձեզ նվիրված տոնով:

Մեծ է ձեր դերակատարությունը մեր ժողովրդի ձեռք բերումների, մշակութային արժեքների ստեղծման, պատմական դժվարին պահերին տոկունության ու ոգու ամրության պահպանման գործում:

Ձեր անսահման սիրո, նվիրվածության ու հոգատարության արդյունքում է , որ ամուր է հայ ընտանիքը և մեր հայրենիքը:

Հրաշալի այս տոնի առթիվ ձեզ գարնանային հմայք ու տրամադրություն եմ մաղթում:

Թող ձեր բոլոր օրերը լեցուն լինեն խինդով, ձեր հոգիներում մշտապես թագավորեն լույսն ու ջերմությունը:

Կրկին անգամ շնորհավորում եմ ձեր տոնը և ցանկանում գարնանային հմայք,անսահման երջանկություն և երազանքների իրականացում